Կարգապահական գործ թիվ ԿԳ-18005

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2018 թվականի հուլիսի 7-ի թիվ 177-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ ԿԳ/134-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ՀԱՅԿ ԱԼՈՒՄՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ նաև՝ Պալատ)** խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Հրանտ Անանյանի, Խորհրդի անդամներ՝ Կարապետ Աղաջանյանի, Սիմոն Բաբայանի, Տիգրան Խուրշուդյանի, Նելլի Հարությունյանի, Կարեն Մեժլումյանի, Կարեն Սարդարյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Հայկ Ալումյանին (արտոնագիր թիվ 284) **(այսուհետ նաև՝ Պատասխանող)** կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

10.01.2018թ. Պալատ մուտքագրվել է Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի **(այսուհետ նաև՝ Դատարան կամ Դիմող)** դատավոր Մ.Մակյանի՝ «Դատական սանկցիա կիրառելու մասին» 27.12.2017թ. որոշումը **(այսուհետ նաև՝ Որոշում կամ Դատական սանկցիա)**, որում նշվել է, որ Դատարանի վարույթում քննվող թիվ ԵԷԴ/0091/01/17 քրեական գործով 20.12.2017 թվականին կայացած դատական նիստի ընթացքում Դատարանը ամբաստանյալ Սմբատ Վարդանի Բարսեղյանը նկատմամբ երկու որոշումներով կիրառել է դատական սանկցիա՝ նախազգուշացում:

Դրանից հետո, ամբաստանյալ Սմբատ Բարսեղյանը հայտարարելով, որ չի կամենում մասնակցել գործի քննությանը, ցանկացել է ինքնակամ լքել դատական նիստերի դահլիճը՝ կատարելով հետևյալ հայտարարությունը, *«...քանի ստեղ չեմ, պաշտպանիցս հրաժարվում եմ...»:*

Ամբաստանյալի նշված հայտարարությունից հետո նրա շահերի պաշտպան փաստաբան Հայկ Ալումյանը դատարանին ասել է, որ իր պաշտպանյալը հրաժարվել է իրենից և նույնպես փորձել է լքել դատական նիստերի դահլիճը: Դատարանը փորձել է ճշտել ամբաստանյալի՝ պաշտպանից հրաժարվելու կամաարտահայտման կամավորությունը և որևէ հարկադրանքից զերծ լինելը, ինչին փաստաբան Հայկ Ալումյանը

հակադրվել է՝ պատճառաբանելով, որ նման կարգ սահմանված չէ: Դրանից հետո դատական նիստի սահմանված կարգը խախտելու համար ամբաստանյալի նկատմամբ դատարանի որոշմամբ կիիառվել է անկցիա՝ դատական նիստերի դահլիճից 4 ժամով հեռացում, և դատական նիստն ընդմիջվել է 15 րոպեով, իսկ դատական նիստը վերսկսվելուց հետո պարզվել է, որ փաստաբան Հայկ Ալումյանն առանց նախագահողի թույլտվության հեռացել է դատական նիստերի դահլիճից:

21.12.2017թ. գրությամբ Դատարանը փոստային առաքման եղանակով, ինչպես նաև էլեկտրոնային փոստով դատական ծանուցագիր է ուղարկել պաշտպան Հայկ Ալումյանին, որով նրան տեղեկացրել է, որ թիվ ԵԷԴ/0091/01/17 քրեական գործով 20.12.2017թ. կայացած դատական նիստը հետաձգվել և նշանակվել է նախապես պայմանավորված օրը՝ 2017 թվականի դեկտեմբերի 27-ին, ժամը 11:00-ին: 26.12.2017թ. փաստաբան Հայկ Ալումյանի կողմից ստորագրված ուղեկցական գրությամբ Երևան քաղաքի էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան է ստացվել Սմբատ Բարսեղյանի դիմումը, որում նշված է եղել հետևյալը, ...*ես հրաժարվել եմ իմ պաշտպանից հենց այն նույն պահից, երբ որոշեցիք ինձ հեռացնել դահլիճից: Սկսած այս պահից ոչ պարոն Հայկ Ալումյանը և ոչ էլ որևէ այլ փաստաբան իրավասու չէ համարվելու իմ պաշտպանը: Ձեր կիրառած սանկցիայի ժամկետը լրանալուց հետո ես ինձ իրավունք եմ վերապահում կրկին օգտվելու պաշտպան ունենալու իրավունքից, որի մասին կհայտնեմ լրացուցիչ...:*

Որոշմամբ նշվել է, որ չնայած այն հանգամանքին, որ փաստաբան Հայկ Ալումյանը ծանուցված է եղել կայանալիք դատական նիստի օրվա և ժամի մասին, սակայն, 27.12.2017թ. կայացած դատական նիստին պաշտպանը չի ներկայացել: Համաձայն որոշման, մինչ հիշյալ դատական նիստը սկսելը, դատարանի աշխատակազմի աշխատակիցները գործով ներգրավված պաշտպանների դատական նիստին ներկայանալու վերաբերյալ պարզաբանումներ ստանալու նպատակով հեռախոսային կապ են հաստատել վերջիններիս, այդ թվում՝ Հայկ Ալումյանի հետ, որի ժամանակ նա տեղեկացրել է, որ որպես պաշտպան չի ներկայանալու տվյալ դատական նիստին, ավելին, ներկայանալու դեպքում՝ կմասնակցի որպես «դիտորդ»:

Դատական նիստը բացված հայտարարվելուց հետո Դատարանը՝ պարզելով, որ փաստաբան Ալումյանը չի ներկայացել, կարգադրել է դատական նիստերի դահլիճ վերադարձնել ամբաստանյալին՝ պարզաբանելու համար ստեղծված իրավիճակը՝ հաշվի առնելով, մասնավորապես, այն հանգամանքը, որ ամբաստանյալն անվերապահորեն չի հրաժարվել պաշտպանից, այլ հայտարարել է, որ դատական նիստերի դահլիճից իր բացակայության ընթացքում իր պաշտպանը չպետք է մասնակցի գործի քննությանը:

Ամբաստանյալը հայտարարել է, որ իր պաշտպանյալից հրաժարվել է դատական նիստերի դահլիճից բացակայության ժամանակ, իսկ դրանից հետո ինքն իրավունք ունի ունենալ պաշտպան:

Դատարանը նիստն ընդմիջել է 30 րոպեով՝ ըստ հնարավորության Հայկ Ալումյանի ներկայությունը դատական նիստի ընթացքին ապահովելու համար: Սակայն փաստաբան Ալումյանը հրաժարվել է ներկայանալ դատարան նշելով, որ չունի նման

պարտավորություն, քանի որ իր տրամադրության տակ է գտնվում ամբաստանյալի գրավոր դիմումն առ այն, որ ինքը հրաժարվում է պաշտպանից:

Դրանից հետո նույն նիստում ամբաստանյալը պնդել է իր ցանկությունը, որ իր պաշտպանությունն իրականացնի Հայկ Ալումյանը:

Դատարանը փաստաբան Հայկ Ալումյանի նշված վարքագիծը որակել է որպես անհարգալից վերաբերմունք դատարանի նկատմամբ, ինչպես նաև գործի քննության բնականոն ընթացքը խոչընդոտող, որի հետևանքով խախտվում է ամբաստանյալ Սմբատ Բարսեղյանի արդար դատաքննության իրավունքը:

2. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը</u>

ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 02.02.2018թ. թիվ 33-Ա/ԿԳ-18005 որոշմամբ փաստաբան Հայկ Ալումյանի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ ‹‹Փաստաբանության մասին›› ՀՀ օրենքի **(այսուհետ նաև՝ Օրենք)** 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 20-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, ինչպես նաև Պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետ նաև՝ Կանոնագիրք**) 4.1 կետի պահանջների խախտման հատկանիշներով:

Կարգապահական գործը 06.02.2018թ. հանձնվել է Պալատի կարգապահական գործ նախապատրաստող անձ Կարեն Քամալյանին **(այսուհետ նաև՝ Նախապատրաստող)**:

3. <u>Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.</u>

<u>3.1. Դիմողի համառոտ բացատրությունը.</u>

Գործի նախապատրաստման ընթացքում Դիմողը բացատրություն չի ներկայացրել:

Դիմողը Խորհրդի նիստին չի ներկայացել, թեև պատշաճ ծանուցվել է նիստի ժամանակի և վայրի մասին:

<u>3.2. Պատասխանողի համառոտ բացատրությունը.</u>

Գործի նախապատրաստման ընթացքում, Պատասխանողը ներկայացրել է բացատրություն, որում նշել է, որ 27.12.2017թ. տեղի ունեցած դատավարության ընթացքում իր կողմից չեն թույլ տրվել այնպիսի գործողություններ, որոնք իրենցից ներկայացնեին ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի, Օրենքի կամ Կանոնագրքի խախտում: Պատասխանողը նշել է, որ այն բանից հետո, երբ իր պաշտպանյալը հայտարարել է (20.12.2017 թվականին բանավոր, իսկ այնուհետև նաև գրավոր), որ հրաժարվում է պաշտպանից, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն, ինքն օրենքի ուժով դադարել է որպես պաշտպան մասնակցել քրեական գործով վարույթին: Պաշտպանից հրաժարումը տեղի է ունեցել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների պահպանմամբ, այն է՝ պաշտպանից հրաժարման մասին Սմբատ Բարսեղյանը հայտարարել է սեփական

նախաձեռնությամբ, կամավոր և պաշտպանի ներկայությամբ: Նույն հոդվածի նույն մասի 2-րդ և 3-րդ նախադասությունները սահմանում են այն բացառությունները, երբ վարույթն իրականացնող մարմինը կարող է չընդունել պաշտպանից հրաժարումը: Տվյալ դեպքում որևէ խոսք չի եղել այն մասին, որ Սմբատ Բարսեղյանը պաշտպանից հրաժարվել է իրավաբանական օգնության վճարման համար միջոցների բացակայության պատճառով: Եթե անգամ նրա պաշտպանից հրաժարման պատճառը լիներ միջոցների բացակայությունը, ապա նույնիսկ այդ դեպքում Դատարանն իրավունք չուներ հարկադրելու իրեն շարունակելու Ս.Բարսեղյանի պաշտպանությունը, այլ պարզապես պարտավոր էր ներգրավել հանրային պաշտպան: Իսկ ինչ վերաբերվում է պաշտպանի պարտադիր մասնակցությանն այն դեպքում, երբ ամբաստանյալը չի գտնվում դատական նիստերի դահլիճում, ապա այդ դեպքում «վարույթն իրականացնող մարմինն իրավունք ունի չընդունել պաշտպանից կասկածյալի կամ մեղադրյալի հրաժարվելը և նշանակել պաշտպան կամ պահպանել նշանակված պաշտպանի լիազորությունները», ինչը նորից վկայում է այն մասին, որ խոսքը գնում է հանրային պաշտպանի մասին: Հետևաբար, ինքն օրենքի ուժով դադարել է լինել Սմբատ Բարսեղյանի պաշտպանը և իր վրա այլևս չեն տարածվել Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետի կանոնները (Սմբատ Բարսեղյանի հետ հարաբերություններում), ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածն ամբողջությամբ, Կանոնագրքի 4.1 կետն ամբողջությամբ: Ինչ վերաբերվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 3-րդ մասի այն դրույթին, որ պաշտպանն իրավունք չունի ինքնակամ դադարեցնել իր լիազորությունները որպես այդպիսին, ապա այն վերաբերվում է պաշտպան-պաշապանյալ հարաբերություններին: Այդ նորմից որևէ կերպ չի բխում, որ պաշտպանյալի ու պաշտպանի միջև վերջինիս լիազորությունները դադարեցնելու մասին համաձայնության դեպքում անհրաժեշտ է ստանալ նաև վարույթն իրականացնող մարմնի համաձայնությունը: Հարկադրական աշխատանքն արգելված է ինչպես Սահմանադրությամբ, այնպես էլ՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայով: Տվյալ դեպքում Դատարանը, հավանաբար, համարել է, որ իր և վստահորդի միջև առկա պայմանագիրը լուծված լինելու պայմաններում ինքը այնուամենայնիվ պետք է հարկադրված լինի շարունակել իր աշխատանքը, այն էլ անվճար հիմունքներով: Այն պահից սկսած, երբ ինքը դադարել է լինել դատավարությանը մասնակցող անձ և չեմ գտնվել դատական նիստերի դահլիճում, Դատարանն առհասարակ իրավասու չէր իր նկատմամբ կիրառելու դատական սանկցիա:

Պատասխանողը Խորհրդի նիստին ներկայացել և ըստ էության հաստատել է բացատրության մեջ նշված հանգամանքները: Պատասխանողը նաև ներկայացրել է ամբաստանյալ Սմբատ Բարսեղյանի կողմից դատարանին հասցեագրված գրությունը, որում ամբաստանյալը կրկին նշել է, որ հրաժարվում է պաշտպան Հայկ Ալումյանից:

3.3. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական վարույթի շրջանակներում վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը Խորհրդին.</u>

Նախապատրաստող Կարեն Քամալյանը 06.04.2018թ. կազմել է եզրակացություն, որի համաձայն ապացուցված է համարում այն փաստը, որ Սմբատ Բարսեղյանի պաշտպան Հայկ Ալումյանը չի ներկայացել դատական նիստին և իրավական օգնություն չի ցուցաբերել իր պաշտպանյալին ոչ թե իր նախաձեռնությամբ, այլ իր պաշտպանյալ Սմբատ Բարսեղյանի կողմից իրեն իրավական օգնություն ցուցաբերելուց կամավոր հրաժարվելու պարագայում, ինչպիսի պայմաններում Նախապատրաստողը գտնում է, որ բացակայում է փաստաբան Հայկ Ալումյանի նկատմամբ հարուցված «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի, ինչպես նաև Կանոնագրքի 4.1 կետի պահանջների խախտման հատկանիշները»:

Կարգապահական գործը Խորհրդին է հանձնվել 09.04.2018թ.:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 07.07.2018թ. ժամը 14:00-ին, Պալատի վարչական շենքի՝ ք.Երևան, Զաքիյան 7-2, 4-րդ հարկ թիվ 12 սենյակում:

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ</u>

Կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» (**այսուհետ նաև՝ Կարգ**) 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:*

Խորհուրդը ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը՝

- Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի թիվ ԵԷԴ/0091/01/17 քրեական գործով Հայկ Ալումյանը հանդիսացել է Սմբատ Բարսեղյանի պաշտպանը:
- Թիվ ԵԷԴ/0091/01/17 քրեական գործով 20.12.2017 թվականին կայացած դատական նիստի ընթացքում ամբաստանյալ Սմբատ Վարդանի Բարսեղյանը հայտարարել է, որ չի կամենում մասնակցել գործի քննությանը, և ցանկացել է ինքնակամ լքել դատական նիստերի դահլիճը, իսկ Դատարանը թույլատրել է:
- Դատական նիստերի դահլիճը լքելու պահին Ս.Բարսեղյանը հայտարարել է, որ. *«...քանի սրտեղ չեմ, պաշտպանիցս հրաժարվում եմ ...»*:
- Դատարանը պարզելու համար, թե Ս.Բարսեղյանն առհասարակ հրաժարվում է իր պաշտպան Հայկ Ալումյանի ծառայություններից, թե միայն իր դատական նիստերի դահլիճից բացակայության և գործի քննությանը չմասնակցելու պայմաններում, կարգադրել է վերադարձնել դեռևս դատական նիստերի դահլիճը չլքած Սմբատ Բարսեղյանին վերջինս կրկին հայտարարել է, որ, *«...քանի ես սրտեղ չեմ, հրաժարվում եմ պաշտպանիցս ...»:*

- Ս.Բարսեղյանի նկատմամբ կիրառվել է դատական սանկցիա և, դատարանի կողմից հայտարարվել է 15 որպե տևողությամբ ընդմիջում:

- Դատական նիստը վերսկսելուց Ս.Բարսեղյանի շահերի պաշտպան Հայկ Ալումյանը չի ներկայացել դատական նիստին:

- 21.12.2017թ. գրությամբ Դատարանը փոստային առաքման եղանակով, ինչպես նաև էլեկտրոնային փոստով դատական ծանուցագիր է ուղարկել պաշտպան Հայկ Ալումյանին, որով նրան տեղեկացրել է, որ թիվ ԵԷԴ/0091/01/17 քրեական գործով 20.12.2017թ. կայացած դատական նիստը հետաձգվել և նշանակվել է նախապես պայմանավորված օրը՝ 2017 թվականի դեկտեմբերի 27-ին, ժամը 11:00-ին:

- 26.12.2017թ. փաստաբան Հայկ Ալումյանի կողմից ստորագրված ուղեկցական գրությամբ Երևան քաղաքի էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան է ստացվել Սմբատ Բարսեղյանի դիմումը, որում նշված է եղել հետևյալը, որ հրաժարվել է իր պաշտպանից այն պահից, երբ իրեն հեռացրել են դահլիճից և այդ պահից սկսած որևէ փաստաբան իրավունք չունի համարվել իր պաշտպանը: Իր նկատմամբ կիրառված սանկցիայի ժամկետը լրանալուց հետո ինքը կօգտվի իր պաշտպան ունենալու իրավունքից, որի մասին լրացուցիչ կհայտնի:

- Դատական նիստը բացված հայտարարվելուց հետո Դատարանը՝ պարզելով, որ փաստաբան Ալումյանը չի ներկայացել, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանք՝ որ ամբաստանյալի կողմից 26.12.2017թ. Դատարանին ներկայացված դիմումի վերաբերյալ պարզաբանում ստանալու անհրաժեշտություն կա կարգադրել է դատական նիստերի դահլիճ վերադարձնել ամբաստանյալին՝ պարզաբանելու համար ստեղծված իրավիճակը և ամբաստանյալը կրկին հայտարարել է, որ իր պաշտպանյալից հրաժարվել է դատական նիստերի դահլիճից բացակայության ժամանակ, իսկ դրանից հետո ինքն իրավունք ունի ունենալ պաշտպան:

- Դատարանը նիստն ընդմիջել է 30 րոպեով՝ փաստաբան Հայկ Ալումյանի ներկայությունը դատական նիստի ընթացքին ապահովելու համար: Սակայն, փաստաբան Ալումյանը հրաժարվել է ներկայանալ դատարան նշելով, որ չունի նման պարտավորություն, քանի որ իր տրամադրության տակ է գտնվում ամբաստանյալի գրավոր դիմումն առ այն, որ ինքը հրաժարվում է պաշտպանից:

- Դատարանը որոշում է կայացրել ամբաստանյալ Սմբատ Բարսեղյանին վերդարձնել դատական նիստերի դահլիճ, որից հետո ամբաստանյալը հայտարարել է, որ ցանկանում է, որպեսզի իր շահերի պաշտպանությամբ զբաղվի փաստաբան Հայկ Ալումյանը:

Նշված փաստերը հաստատվում են գործում առկա ապացույցներով, այդ թվում՝ Որոշմամբ, Պատասխանողի բացատրությամբ, Սմբատ Բարսեղյանի կողմից 24.12.2017 թվականին ներկայացրած դիմումով, դատական նիստի ձայնագրությամբ:

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքի համաձայն՝ փաստաբան Հայկ Ալումյանի (արտոնագիր 284, ստացված՝ 06.09.1996թ.) նկատմամբ 2015-2018թթ. ընկած ժամանակահատվածում 4 անգամ հարուցվել է կարգապահական վարույթ (3 ավարտված վարույթ և 1 ընթացիկ վարույթ):

Խորհրդի 17.08.2017թ. թիվ ԿԳ/72-Ա, 02.11.2017թ. թիվ ԿԳ/99-Ա, 03.04.2018թ. թիվ ԿԳ/59-Ա որոշումներով փաստաբան Հայկ Ալումյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթները կարճվել են:

7. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Պալատի Խորհուրդը գտնում է, որ փաստաբան Հայկ Ալումյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման հետևյալ պատճառաբանությամբ.

7.1 Կանոնագրքի 4.1 կետի խախտման մասով.

Օրենքի 39-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար:*

Կանոնագրքի 4.1 կետի համաձայն՝ *փաստաբանը, ով ներկայանում է կամ մասնակցում է գործին դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի առջև, պետք է ենթարկվի այդ դատարանի կամ տրիբունալի կողմից կիրառվող վարվելակերպի կանոններին, այդ թվում հարգանքով վերաբերվել դատավորին և դատավարության մյուս մասնակիցներին: Այդ կանոններին ենթարկվելու պարտականությունը չի սահմանափակում փաստաբանի՝ դատավորի կամ արբիտրի գործողությունների դեմ առարկելու կամ այլ դատավարական իրավունքներից օգտվելու հնարավորությունը: Փաստաբանը դատարանի հանդեպ ճշգրիտ հարգանք և համակրանք դրսևորելու հետմիաժամանակ պետք է իր վստահորդի շահերը պաշտպանի անկաշկանդ և անվախ՝ հաշվի չառնելով իր անձնական շահերը կամ ցանկացած հետևանքները, որոնք կպատահեն իր կամ ցանկացած այլ անձի հետ:*

Նշված կանոնը նաև վկայակոչող (բլանկետային) է, քանի որ հղում է կատարում փաստաբանի և դատարանի փոխհարաբերությունները կարգավորող այլ իրավական ակտին, տվյալ դեպքում՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքին:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ **պաշտպանը պարտավոր է կասկածյալին և մեղադրյալին իրավաբանական օգնություն ցույց տալու համար ներկայանալ քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով**:

Վերլուծելով վերը նշված կանոնների պահանջները, Խորհուրդը գտնում է, որ սույն գործով պարզման ենթակա է այն հանգամանքը, թե **արդյո՞ք Պատասխանողն *առանց հարգելի պատճառի դատական նիստին չի ներկայացել՝ դրանով անհարգալից վերաբերմունք դրսևորելով Դատարանի նկատմամբ*:**

Սույն դեպքում Պալատի խորհուրդը փաստաբան Հայկ Ալումյանի՝ 27.12.2017թ. դատական նիստին չներկայանալու վարքագիծը քննարկելիս, ուսումնասիրության առարկա է դարձնում նաև այդպիսի վարքագծի դրսևորման պատճառները:

Ըստ հաստատված փաստերի փաստաբան Հայկ Ալումյանը 27.12.2017թ. դատական նիստին չի ներկայացել, քանի որ պաշտպանյալը հրաժարվել է իր ծառայություններից: ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը սահմանում է նաև պաշտպանից հրաժարվելու դեպքերն ու կարգը, ինչպես նաև պարտադիր պաշտպանության ինստիտուտը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի համաձայն՝

2. Անձը պաշտպանի իրավավիճակ ձեռք է բերում կասկածյալի կամ մեղադրյալի համաձայնությամբ՝ նրա պաշտպանությունն ստանձնելու պահից: Պաշտպանը պարտավոր է պաշտպանությունն ստանձնելուց հետո այդ մասին անմիջապես տեղյակ պահել քրեական վարույթն իրականացնող մարմնին:

3. Պաշտպանը դադարում է որպես այդպիսին մասնակցել քրեական գործով վարույթին, եթե՝

1) կասկածյալը կամ մեղադրյալը լուծել են նրա հետ ունեցած համաձայնությունը (...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասիերի համաձայն՝

Քրեական գործով վարույթին պաշտպանի մասնակցությունը պարտադիր է՝

8) սանկցիան կիրառելու պահից՝ սույն հոդվածի առաջին մասի 11-րդ կետով նախատեսված դեպքում:

3. Պաշտպան ունենալու՝ կասկածյալի կամ մեղադրյալի արտահայտած ցանկությունը քրեական գործով վարույթին պաշտպանի պարտադիր մասնակցությունը կանխորոշող հանգամանք չէ, եթե նրանք ունեցել են նշանակված պաշտպան, սակայն հայտարարել են պաշտպանից հրաժարվելու մասին, որն ընդունել է քրեական վարույթն իրականացնող մարմինը:

4. Քրեական գործով վարույթին պաշտպանի պարտադիր մասնակցությունն ապահովում է քրեական վարույթն իրականացնող մարմինը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝

1. Պաշտպանից հրաժարվելը նշանակում է կասկածյալի կամ մեղադրյալի մտադրությունը՝ իր պաշտպանությունն իրականացնել առանց որևէ պաշտպանի իրավաբանական օգնության: Պաշտպանից հրաժարվելու մասին կասկածյալի կամ մեղադրյալի հայտարարությունն արտացոլվում է արձանագրության մեջ:

2. Պաշտպանից հրաժարվելը քրեական վարույթն իրականացնող մարմինն ընդունում է միայն այն դեպքում, եթե կասկածյալի կամ մեղադրյալի կողմից այդ մասին հայտարարվել է սեփական նախաձեռնությամբ, կամավոր և այն պաշտպանի ներկայությամբ, որը կարող էր նշանակվել կամ նշանակված է պաշտպան: Չի ընդունվում պաշտպանից հրաժարումը, եթե այն հարկադրված է իրավաբանական օգնության վճարման համար միջոցների բացակայությամբ: Սույն օրենսգրքի 69 հոդվածի առաջին

մասի 2-5-րդ և 8-րդ կետերով նախատեսված դեպքերում քրեական վարույթն իրականացնող մարմինն իրավունք ունի չընդունել պաշտպանից կասկածյալի կամ մեղադրյալի հրաժարվելը և նշանակել պաշտպան կամ պահպանել նշանակված պաշտպանի լիազորությունները:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *պաշտպանը պարտավոր է՝«(...)*

2) ենթարկվել դատախազի, քննիչի, հետաքննության մարմնի, դատական նիստը նախագահողի օրինական կարգադրություններին.

3) մինչև ընդմիջում հայտարարելը առանց նախագահողի թույլտվության չլքել դատական նիստերի դահլիճը.

4) դատական նիստում պահպանել կարգուկանոն(...)»:

ՀՀ Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով «Իրավաբանական օգնությունից, այն է՝ պաշտպան ունենալուց կամ նշանակված պաշտպանից հրաժարվելու՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով թույլատրելի դեպքերին», 29.06.2009թ. թիվ ԵՔՐԴ/0436/01/08 որոշմամբ արձանագրել է, որ իրավաբանական օգնությունից օգտվելու, այն է՝ պաշտպան ունենալու վերաբերյալ անձի հստակ և կամավոր արտահայտած ցանկությունը պարտադիր է վարույթն իրականացնող մարմնի համար, մասնավորապես նշելով, որ՝ «**վարույթն իրականացնող մարմնի կողմից անձի հրաժարումը պետք է ընդունվի միայն այն դեպքում, երբ, հաշվի առնելով անձի տարիքը և հետազոտելով պաշտպանության իրավունքից նրա հրաժարվելու դրդապատճառները, վարույթն իրականացնող մարմինը կգա այն համոզման, որ.**

ա) նման ցանկություն նա հայտնել է ինքնակամ, սեփական նախաձեռնությամբ և այն պարտադրված չէ գործի քննության հանգամանքներով,

բ) նա կարողանում է ամբողջությամբ գիտակցել իր վարքագծի հետևանքները,

գ) անձն ի վիճակի է ինքնուրույն իրականացնել իր պաշտպանությունը»:

Գործում առկա ապացույցներով Խորհուրդը հաստատված է համարում, որ փաստաբան Հայկ Ալումյանը, քանի որ իր պաշտպանյալը, ինչպես գրավոր, այնպես էլ՝ բանավոր կարգով հայտարարել է, որ հրաժարվում է իրենից: Հայկ Ալումյանն իր բացատրությամբ պնդել է, որ իր պաշտպանի լիազորությունները դադարել են, հետևաբար այդ պատճառով չի ներկայացել դատական նիստին:

Խորհուրդն արձանագրում է, որ դատական սանկցիայի հիման վրա քննարկվում է դատական նիստին Հայկ Ալումյանի առանց հարգելի պատճառի չներկայանալու վարքագիծը: Այս պայմաններում, եթե նույնիսկ պաշտպանից հրաժարվելու հարցում դատարանի և պաշտպանության կողմի միջև առաջացած վեճով իրավացի է դատարանը, ապա միևնույն է, հաշվի առնելով սույն գործի փաստերը, փաստաբան Հայկ Ալումյանը դատական նիստին չի ներկայացել՝ իր պաշտպանի լիազորությունները դադարած համարելու պատճառով: Հետևանար Խորհուրդը գտնում է, որ բոլոր դեպքերում, փաստաբան Հայկ Ալումյանի բացակայությունը հարգելի պատճառով է:

Նման պայմաններում, Խորհուրդը գտնում է, որ Կանոնագրքի 4.1 կետի խախտման մասով հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման:

7.2. Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի խախտման մասով.

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է ազնվորեն և բարեխղճորեն պաշտպանել վստահորդի իրավունքները և օրինական շահերը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով ու եղանակներով:*

Սույն իրավադրույթի նորմատիվ էությունը կայանում է նրանում, որ փաստաբանը, ելնելով իր իրավապաշտպան գործառույթից, պարտավոր է դրսևորել իր նշված գործառույթով պայմանավորված հասարակական հատուկ կարգավիճակին հարիր ազնիվ վարքագիծ վստահորդի հետ հարաբերություններում և առավելագույն ջանքեր գործադրել իր վստահորդի շահերը բոլոր օրինական միջոցներով պաշտպանելու ուղղությամբ:

Խորհուրդը գտնում է, որ սույն կարգապահական գործի քննության ընթացքում չեն ներկայացվել այնպիսի ապացույցներ, որոնցով կհաստատվեր Պատասխանողի կողմից Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի խախտում թույլ տալու հանգամանքը:

Ուստի, Խորհուրդը գտնում է, որ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի խախտման մասով կարգապահական վարույթը ենթակա է կարճման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7- րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի, 39.8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության 16.26-րդ կետի, Կարգի 28-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 30-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի պահանջներով Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Պալատի նախագահի 02.02.2018թ. թիվ 33-Ա/ԿԳ-18005 որոշմամբ փաստաբան Հայկ Ալումյանի (արտոնագիր՝ թիվ 284) նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը կարճել:

2. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ Հրանտ Անանյան

07 հուլիսի 2018թ.

թիվ ԿԳ/134-Ա
ք. Երևան